**ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ N 2**
**N ԳՀԱՊՁԲ-2.3-1 ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ**

ք. Երևան 26.12.2018թ.

ՀՀ պաշտպանության նախարարությունը, ի դեմս ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ Մ. Ղամբարյանի, ով գործում է նախարարության կանոնադրության հիման վրա՝ այսուհետև Գնորդ, մի կողմից և «Հակոբ Առաքելյան» Ա/Ձ-ն, ի դեմս անհատ ձեռնարկատեր Հակոբ Առաքելյանի, այսուհետև՝ Վաճառող, մյուս կողմից, երկուսը միասին՝ Կողմեր՝ հիմք ընդունելով 28.06.2018թ. կնքված NԳՀԱՊՁԲ-2/3-1 (այսուհետ՝ Պայմանագիր) 8.5 կետը և ՀՀ կառավարության 04.05.2017թ. N526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգի» 56-րդ կետի 6-րդ ենթակետի պահանջները՝ փոխադարձ համաձայնությամբ որոշեցին կնքել սույն փոփոխությունը (այսուհետև՝ Փոփոխություն) հետևյալի մասին.

**1. Փոփոխության առարկան**

1.1 Քանի որ սույն պայմանագրի կատարումը 9-րդ չափաբաժնի (Բազմաճախարակ (ամբարձիչ մեքենա) (Ղեկավարման վահանակ <<Ալֆա>>)) մասով հնարավոր չի լինելու կատարել 2018թ. ընթացքում, ուստի Կողմերը փոխադարձ համաձայնությամբ որոշեցին Պայմանագրին և 29.09.2018թ. կնքված N1 փոփոխությանը կից վճարման ժամանակացույցում կատարել փոփոխություն՝ նախատեսելով 2 160 000 (երկու միլիոն հարյուր վաթսուն հազար) ՀՀ դրամի չափով կանխավճար՝ հաջորդ բյուջետային տարվա ընթացքում պայմանագրի կատարման դեպքում ֆինանսավորման խնդիր չունենալու նպատակով:

1.2 Կանխավճարի տրամադրումը լիազորված մարմնի կողմից սույն փոփոխությունը հաշվառվելուց հետո՝ մեկ բանկային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ քան 27.12.2018թ. ներառյալ: Կանխավճարի մարումն իրականացվում է մատակարարված ապրանքին համամասնորեն: Մատակարարման արդյունքում հաշվարկման ենթակա տոկոսները Վաճառողը պարտավոր է վճարել ՀՀ պետական բյուջեի համապատասխան հաշվեհամարին:

**2. Այլ պայմաններ**

2.1 Սույն Փոփոխությունն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև փոխադարձ պարտավորությունների լրիվ կատարումը:

2.2 Սույն Փոփոխության մեջ չնշված՝ Կողմերի՝ Պայմանագրով նախատեսված իրավունքները և պարտականությունները, Ապրանքի հանձնման-ընդունման, Կողմերի պատասխանատվության հետ կապված և այլ հարաբերություններ թողնվում են անփոփոխ:

2.3 Սույն Փոփոխությունը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը, կազմված է 3 էջից, հայերենով, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն փոփոխությանը կից N 1 հավելվածը հանդիսանում է փոփոխության անբաժանելի մասը:

**3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունը:**

| ԳՆՈՐԴ | ՎԱՃԱՌՈՂ |
|---|---|
| ՀՀ պաշտպանության նախարարություն<br>ք. Երևան Բագրևանդի 5<br>ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն<br>Հ/Հ 900011144079<br>ՀՎՀՀ 02522157<br>ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ<br>Մ. ՂԱՄԲԱՐՅԱՆ | «Հակոբ Առաքելյան» Ա/Ձ<br>Արարատի մարզ, գ. Գեղանիստ, 15 փ. 14տ.<br>«Ամերիաբանկ» ՓԲԸ<br>Հ/Հ 1570015677240200<br>ՀՎՀՀ 30933003<br>Հ. ԱՌԱՔԵԼՅԱՆ |

Հավելված N 1 ԳՀԱՊՁԲ-2.3-1
ծածկագրով գնման պայմանագրի թիվ 2 Փոփոխության

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

**մինչև փոփոխությունը**

ՀՀ դրամ

| Ապրանքի | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| Հ/Հ | (CPV) կոդ | Անվանումը՝ | դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2018թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում | | | | | |
| | | | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր |
| 1. | 42141180-3/10/2 | Բազմաճախարակ (ամբարձիչ մեքենա) Ղեկավարման վահանակ ՌՀԿ | | | | 636000 | 636000 | 636000 |
| 2 | 31211290-3/10/2 | Կոմուտացիոն սարք (կոմուտացիոն սարք) | 1050000 | 1050000 | 1050000 | 1050000 | 1050000 | 1050000 |
| 3. | 31151160-2/10/2 | Լիցքավորիչներ (լիցքավորման սարք) | 580000 | 580000 | 580000 | 580000 | 580000 | 580000 |
| 4. | 31221190-1/10/2 | Միացուցիչներ և կոնտակտային տարրեր (էլեկտրական հանգույց մեծ) | 598976 | 598976 | 598976 | 598976 | 598976 | 598976 |
| 5. | 31221190-2/10/2 | Միացուցիչներ և կոնտակտային տարրեր (էլեկտրական հանգույց փոքր) | 489990 | 489990 | 489990 | 979980 | 979980 | 979980 |
| 6. | 31211250-1/10/2 | Բաշխիչ բլոկներ (բաշխման տուփ(ՇՄ-68)) | 268200 | 268200 | 268200 | 268200 | 268200 | 268200 |
| 7. | 31681700-2/10/2 | Բաժանարար տուփ (բաժանարար տուփ (ԿՇԿ)) | 189900 | 189900 | 189900 | 189900 | 189900 | 189900 |
| 8. | 31171400-2/10/2 | Սնուցման աղբյուրների փոխակերպիչներ (տրանսֆորմատոր 2,5 ԿՎԱ) | 158000 | 158000 | 158000 | 158000 | 158000 | 158000 |
| 9 | 42141180-4/10/2 | Բբազմաճախարակ (ամբարձիչ մեքենա) (Ղեկավարման վահանակ Ալֆա) | | | | 2160000 | 2160000 | 2160000 |
| 10. | 31211100-1/10/2 | Էլեկտրական սարքավորումների վահանակներ (էլ. Վահանակ) | | | | 716000 | 716000 | 716000 |

Վճարման ենթակա գումարները ներկայացված են աճողական կարգով:

**թիվ 2 փոփոխությամբ**

ՀՀ դրամ

| Ապրանքի | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| Հ/Հ | (CPV) կոդ | Անվանումը՝ | դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2018թ-ին՝ ըստ ամիսների, բայց ոչ ուշ քան 27.12.2018թ. | | | | | |
| | | | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր |
| 1. | 42141180-3/10/2 | Բազմաճախարակ (ամբարձիչ մեքենա) Ղեկավարման վահանակ ՌՀԿ | | | | 636000 | 636000 | 636000 |
| 2 | 31211290-3/10/2 | Կոմուտացիոն սարք (կոմուտացիոն սարք) | 1050000 | 1050000 | 1050000 | 1050000 | 1050000 | 1050000 |
| 3. | 31151160-2/10/2 | Լիցքավորիչներ (լիցքավորման սարք) | 580000 | 580000 | 580000 | 580000 | 580000 | 580000 |
| 4. | 31221190-1/10/2 | Միացուցիչներ և կոնտակտային տարրեր (էլեկտրական հանգույց | 598976 | 598976 | 598976 | 598976 | 598976 | 598976 |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | մեծ) | | | | | | |
| 5. | 31221190-2/10/2 | Միացուցիչներ և կոնտակտային տարրեր (էլեկտրական հանգույց փոքր) | 489990 | 489990 | 489990 | 979980 | 979980 | 979980 |
| 6. | 31211250-1/10/2 | Բաշխիչ բլոկեր (բաշխման տուփ(ՇՄ-68)) | 268200 | 268200 | 268200 | 268200 | 268200 | 268200 |
| 7. | 31681700-2/10/2 | Բաժանարար տուփ (բաժանարար տուփ (ԿՇԿ)) | 189900 | 189900 | 189900 | 189900 | 189900 | 189900 |
| 8. | 31171400-2/10/2 | Սնուցման աղբյուրների փոխակերպիչներ (տրանսֆորմատոր 2,5 ԿՎԱ) | 158000 | 158000 | 158000 | 158000 | 158000 | 158000 |
| 9 | 42141180-4/10/2 | Բբազմաճախարակ (ամբարձիչ մեքենա) (Ղեկավարման վահանակ Ալֆա) | | | | | | 2160000 |
| 10. | 31211100-1/10/2 | Էլեկտրական սարքավորումների վահանակներ (Էլ. Վահանակ) | | | | 716000 | 716000 | 716000 |

Վճարման ենթակա գումարները ներկայացված են աճողական կարգով:

ԳՆՈՐԴ

ՀՀ պաշտպանության նախարարություն

ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ

Մ. ՂԱՄԲԱՐՅԱՆ

ՎԱՃԱՌՈՂ

«Հակոբ Առաքելյան» Ա/Ձ

Հ. ԱՌԱՔԵԼՅԱՆ